



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿՆ ՏԻԱՐ
ՏԻԳՐԱՆ ՓԱՓԱԶՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ»
ԾՔԱՆԾԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ՏԻԳՐԱՆ ՓԱՓԱԶԵԱՆԻՆ,
ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՈՂԶՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԼԻՈՆ

Մենք՝ կաթողիկոս Ամենայն Հայոց, յոյժ երջանիկ ենք, որ մեր ազգի վա-
ականերու մէջ կը գտնուին ազնուահոգի անձնատրութիւններ, որոնք իրենց
բարոյական և նիւթական օժանդակութիւնը կը նուիրաբերեն, որպէսզի առաւել
շէն ու պայծառ դառնայ մեր Եկեղեցւոյ պատմական կեդրոն Սուրբ Էջմիածինը:

Դուք, յարգարժան Տիար, իբրև մէկ ազնիւ վառակը մեր հաւատաւոր աշ-
գին, յաւերժացնելով Ձեր բարեպաշտ հօր՝ Եղիշէ Փափազեանի անթառամ յիշա-
տակը, Ձեր սրտաբոխ նուիրատուութեամբ կը նպաստէք Մայր Աթոռիս պայծա-
ռութեան, որուն համար Ձեզի կը յայտնենք Մեր շնորհակալութիւնը:

Այսու գնահատելով Ձեր սրտագին նուէրը, այլև սիրով ընդառաջելով միջ-
նորդութեանը Արևմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ և Փարիզի
հայոց առաջնորդ Գերաշնորհ Տ. Սերովբէ արքեպիսկոպոս Մանուկեանի, Մեր
սոյն կոնդակով Ձեզի կը շնորհենք «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ» շքանշանը, որ
վայն կրէք Ձեր ազնիւ կուրծքին վրայ արդար հպարտանքով շատ երկար,
արևոտ ու խաղաղ տարիներ լիակատար քաջառողջութեամբ և ընտանեկան եր-
ջանկութեամբ, որպէս մշտայուղ նշան անմոռաց սիրոյ առ Մայր Աթոռ Սուրբ
Էջմիածին:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւետ օրինեալ ի Տեառնէ և ի
Մենջ». ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուաւ կոնդակս ի 11 յունուարի
1982 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԱԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1104